



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 171

ք.Արտաշատ

„10 „ 07 2018թ.

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԲԱԺԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016Թ.
ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 45 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “ Նորմատիվ իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” ՆՀ-728 հրամանագրի 1.2 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի 1791-Ն որոշմամբ հաստատված Արարատի մարզպետարանի կանոնադրության 16-րդ կետով՝

1. Մարզպետի տեղակալների միջև կատարել մարզպետարանի աշխատանքների բաժանում՝ ըստ ներքոհիշյալ բնագավառների.

մարզպետի տեղակալ Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
Կրթության, մշակույթի և սպորտի
Առողջապահության և սոցիալական ապահովության

մարզպետի տեղակալ Արթուր Մկրտչյան

Գյուղատնտեսության և բնապահպանության
Զարգացման ծրագրերի և վերլուծության
Տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով

մարզպետի տեղակալ Հայրապետ Բաբայան

Քաղաքաշինության
Հողաշինության և հողօգտագործման
Զորահավաք, զորակոչ և արտակարգ իրավիճակներ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի ապրիլի 26-ի ,, Մարզպետի տեղակալների և խորհրդականի միջև աշխատանքների բաժանում կատարելու և Արարատի մարզպետի 2014թվականի փետրվարի 24-ի թիվ 28 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին,, թիվ 45 կարգադրությունը :

ՄԱՐԶՊԵՏ՝



Գ.ՍԱՐԳՍՅԱՆ